Հաստատված է
Պետության և
իրավունքի
տեսության և
սահմանադրական
իրավունքի ամբիոնի 31.
08.2020թ.
նիստում (արձ.թիվ 1)
Ամբիոնի պետ՝
.....
(ստորագրություն)
.....
(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
(Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա)

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Մարդու իրավունքների տեսության հիմնահարցեր
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Իրավագիտություն (մագիստրատուրա), հեռակա ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ	Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոն E-mail: pitambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Գ.Առաքելյան, E-mail: rmarandyan@mail.ru, հեռ. 055 56 67 23
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ	1-ին կուրս, 1-ին կիսամյակ
ԿՐԵԴԻՏՆԵՐ	3 (երեք)

Կրթական աստիճան	մագիստրոս
ԿՐԵԴԻՏՆԵՐ	3(երեք)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ	«Մարդու իրավունքների տեսության հիմնահարցեր» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 14 ժամ դասախոսություն, 76 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին մագիստրոսը համալսարանական գրականության հենքի վրա վերլուծական և հետազոտական աշխատանքներ է իրականացնում, պատրաստում է ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը 2 ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում՝ ստուգարքով:
Մուտքային պահանջներ	Դասընթացը կառուցվում է «ՀՀ սահմանադրական իրավունք», «Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք», «Միջազգային իրավունք», «Եվրոպական իրավունք» դասընթացների հենքի վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	«Մարդու իրավունքների տեսության հիմնահարցեր» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են մարդու իրավունքների ձևավորման պատմական գործընթացը, խնդրո առարկա հարցի հետ կապված կոնվենցիաները, ՄԱԿ-ի դերը, ժամանակակից տեսական մոտեցումները:
ՆՊԱՏԱԿ	Դասընթացին պատակն է մագիստրոսներին համապարփակ դասախոսությունների միջոցով ներգրավել գիտահետազոտական աշխատանքների շրջանակ՝ հիմք ընդունելով՝ 1.ՀՀ Սահմանադրության դրույթները, 2.Մարդու իրավունքների համընդհանուր հռչա-

	կագիրը, 3.ՄԱԿ-ի հռչակագրերը և դաշնագրերը, 4. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթները, 5. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպայինիրավունքը:
ԽՆԴԻՐՆԵՐ	Դասընթացի խնդիրներն են՝ ▪ ներկայացնել մարդու իրավունքների տեսության առարկան, համակարգը և խնդիրները, ▪ ներկայացնել կրոնի գործոնը մարդու իրավունքների ուսումնասիրության բնագավառում, ▪ ուսումնասիրել ժամանակակից փաստաթղթերը և կոնվենցիաները, ինչպես նաև՝ տեսական մոտեցումները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 1.Կարողանա	1) տիրապետել մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական նորմերին և այդ բնագավառում բարեփոխումներին, 2) կարևորել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների առաջնայնությունը բոլոր բնագավառներում, 3) ներկայացնել Հայաստանի Հանրապետության գործունեությունը մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերին միանալու և վավերացնելու բնագավառում, 4) ընկալել ՀՀ Սահմանադրության կարևորությունը մարդու իրավունքների պաշտպանության խնդրում, 5) քննարկումներ և բանավեճեր անցկացնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և այդ բնագավառում կրոնի կարևոր դերակատարության վերաբերյալ, 6) անդրադառնալ մարդու իրավունքների բնագավառում գոյությունն

	ունեցող խնդիրներին և բացթողումներին և առաջարկել դրանց հնարավոր լուծման ճանապարհները, 7) տիրապետել մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական նորմերի կիրառման մեթոդաբանությանը, 8) տիրապետել մարդու իրավունքների պաշտպանության ունիվերսալ և տարածաշրջանային կոնվենցիաներին, 9) տիրապետել մարդու իրավունքների պաշտպանության վերահսկողության միջազգային կառուցակարգերին:
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	
Հիմնական	1.ՀՀ Սահմանադրություն: 2.МГИМО Международное право, М.2012: 3.Тиунов О.И. Международное гуманитарное право, М. 2009: 4. ՄԱԿ-ի մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի ընտրանի-Երևան 2009:
Լրացուցիչ	1..Бекяшев К.А. Международное публичное право-М., 2014: 2.Международная жизнь, М. 2013: 3. Հանս Պետեր Գասեր-Միջազգային մարդասիրական իրավունք -Երևան 1999: 4.Международное право в 2-х томах, М.2009: 5.Ֆլորանս Բենուս - Ռոբեր, Հայնրիխ Կլեբես, Եվրոպայի խորհրդի իրավունք – Եվրոպայի խորհուրդ -Երևան, 2007թ.:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	Ստուգարք (ստուգված,չ ստուգված)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ/ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվումեն «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված»կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվումեն հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը,սպառիչ,հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրումայն,նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները,ճիշտ է հիմնավորումը ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներթույլչտալով, բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների, գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը,բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ,խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնականառաջադրանքները, դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի

ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
	Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:

	ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:

Ներկայություն	Սովորողի՝ դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև՝ մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ	Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ	Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **Մարդու իրավունքների տեսությունը և ձևավորման պատմական գործընթացը** **(2ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1.Մարդու իրավունքների տեսության վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումները: 2. Մարդու իրավունքների պաշտպանության արմատները:	Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:

Թեմա 2 **Մարդու իրավունքների բիլլ-ը որպես մարդու իրավունքների պաշտպանության** **առաջին իրավականորակարգված փաստաթուղթ** **(2ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Մարդու իրավունքների բիլլ-ի ամրագրման գործընթացը: 2. Մարդու իրավունքների բիլլ-ը ԱՄՆ-ի սահմանադրությունում: Փաստաթղթի նշանակությունը Մարդու իրավունքների նորմերի իրավականորակարգման բնագավառում:	Հարցեր 1-2- դասախոսություն: Ուսանողները նախապես ծանոթանում են գրականությանը՝ խնդրո առարկա հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

Թեմա 3 ՄԱԿ-ը որպես մարդու իրավունքների իրավական նորմերի մշակման, դրանց զարգացման և իրավական ոնակարգման հիմնարար կառույց: Մարդու իրավունքների խորհուրդը որպես մարդու իրավունքների բնագավառում կարևորագույն բարեփոխումների գործոն (2ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունման գործընթացը ՄԱԿ-ում: 2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը որպես մարդու իրավունքների տեսության կարևորագույն աղբյուր: 3. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը որպես համամարդկային արժեք: 4. Մարդու իրավունքների խորհրդի ստեղծման անհրաժեշտությունը և իրավական հենքը: 5. Մարդու իրավունքների խորհրդի գործառույթները: 6. Մարդու իրավունքների խորհրդի տեսական և պրակտիկ նշանակությունը:	Հարցեր 1,2, 4, 5 - կարդացվում է դասախոսություն: Հարցեր 3, 6 – Ինքնուրույն աշխատանք: Ուսանողները ծանոթանում են Հռչակագրի դրույթներին և խորհրդի տեսական ու պրակտիկ նշանակությանը՝ ավելի խորը գիտելիքներ ձեռքբերելու նպատակով:

Թեմա 4 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի ինստիտուտը որպես մարդու իրավունքների պաշտպանության ունիվերսալ մարմին (2ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1. Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի ինստիտուտի ձևավորումը և գործառույթները: 2. Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի զարգացող և անցումային շրջանում (ԱՊՀ երկրներ) գտնվող ներկայացուցչությունների դերն ու նշանակությունը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: 3. Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի ինստիտուտի տեսական և պրակտիկ համագործակցությունը տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների համապատասխան կառույցների հետ:	Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն. Ուսանողները նախապես ծանոթանում են խնդրո առարկա թեմային վերաբերող նյութերին և գրականությանը, ներկայացնում են խնդրահարույց հարցեր: Հարց 3 - Ինքնուրույն աշխատանք: Ուսանողները ծանոթանում են Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի ինստիտուտի տեսական և պրակտիկ համագործակցությանը տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների համապատասխան կառույցների հետ՝ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

Թեմա 5 **Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության միջազգային կոնվենցիաների և դաշնագրերի տեսական և գործնական նշանակությունը ժամանակակից միջպետական հարաբերություններում** **(2ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի կիրառման իրավական հենքը: 2. ՄԱԿ-ի մարդու իրավունքների միջազգային դաշնագրերի կիրառման դժվարությունները և առանձնահատկությունները «Երրորդ աշխարհի» երկրներում:	Հարցեր 1-2 -անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Ուսանողները նախօրոք ուսումնասիրում են քննարկվող նյութերը, բարձրացնում են խնդրահարուց հարցեր:

Թեմա 6 **Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) ինստիտուտի ձևավորումը, նրա տեսական և պրակտիկ նշանակությունը** **(2ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1.«Օմբուդսմենի» ինստիտուտի ձևավորման պատմական գործընթացը: Եվրոպական պետությունների դերը խնդրո առարկա բնագավառում: 2.«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի մշակումը և ընդունումը: Մարդու իրավունքների պաշտպանի ընտրությունը ՀՀ-ում և նրա գործառույթները:	Հարց 1 - անցկացվում է դասախոսություն քննարկման եղանակով: Ուսանողները նախապես ուսումնասիրում են միջազգային փորձը և ներկայացնում են իրենց մոտեցումները: Հարց 2 - Ինքնուրույն աշխատանք: Ուսանողները ծանոթանում են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքին, այն համեմատում են այլ պետությունների համապատասխան օրենքների հետ և բարձրացնում խնդրահարույց հարցեր:

Թեմա 7 **Կրոնի գործոնը և դրահետ կապված հայեցակարգերը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում:Մարդու իրավունքների տեսության հիմնախնդիրները նոր ժամանակներում** **(2ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1. Իսլամը և մարդու իրավունքները: Շարիաթի իրավունքը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: 2. Կրոնական ուսմունքների դերը իրավունքների հայեցակարգի կայացման բնագավառում: 3. Մարդու իրավունքների գաղափարախոսությունը և փիլիսոփայությունը ժամանակակից միջազգային հարաբերություններում: Արևմտյան քաղաքակրթության դերը մարդու իրավունքների գաղափարախոսության բնագավառում: Մարդու իրավունքների բարեփոխումները ՄԱԿ-ի համակարգում:	Հարց 1, 3 - կարդացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Ուսանողները նախապես ծանոթանում են Շարիաթի իրավունքի,Ղուրանի նորմերի, ինչպես նաև՝ իսլամում գոյություն ունեցող Սուննի և Շիա ուղղությունների հետ: Ուսումնասիրում են այդ բնագավառում գոյություն ունեցող նյութեր, ծանոթանում են նաև մարդու իրավունքների ոլորտի արդի հիմնախնդիրներին: Հարց 2- Ինքնուրույն աշխատանք: Ուսանողները ծանոթանում են տարբեր կրոնական ուսմունքների մոտեցումներին՝ կապված մարդու իրավունքների պաշտպանության հետ: Բարձրացնում են խնդրահարույց հարցեր:

Հարցաշար

«Մարդու իրավունքների տեսության հիմնահարցեր» դասընթացի ստուգարքի

1. Մարդու իրավունքների տեսության վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումները
2. Մարդու իրավունքների պաշտպանության արմատները
3. Մարդու իրավունքների բիլլ-ի ամրագրման գործընթացը
4. Մարդու իրավունքների բիլլ-ը ԱՄՆ-ի սահմանադրությունում: Փաստաթղթի նշանակությունը Մարդու իրավունքների նորմերի իրավականացման բնագավառում
5. Մարդու իրավունքների առաջնային խնդիրները ըստ Թ. Ջեֆերսոնի, Բ. Ֆրանկլինի և Ջ. Մեդիսոնի: Խնդրո առարկա հարցի հետ կապված նրանց մոտեցումների ընդհանրությունը
6. 1789թ. Ֆրանսիայի Ազգային Ժողովում ընդունված «Մարդու և քաղաքացու իրավունքները» հռչակագրի առանցքային նշանակությունը
7. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունման գործընթացը ՄԱԿ-ում
8. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը որպես մարդու իրավունքների տեսության կարևորագույն աղբյուր
9. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը որպես համամարդկային արժեք
10. Մարդու իրավունքների խորհրդի ստեղծման անհրաժեշտությունը և իրավական հենքը
11. Մարդու իրավունքների խորհրդի գործառույթները
12. Մարդու իրավունքների խորհրդի տեսական և պրակտիկ նշանակությունը
13. Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի ինստիտուտի ձևավորումը և գործառույթները
14. Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի զարգացող և անցումային շրջանում (ԱՊՀ երկրներ) գտնվող երկայացուցչությունների դերն ու նշանակությունը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում
15. Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի ինստիտուտի տեսական և պրակտիկ համագործակցությունը տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների համապատասխան կառույցների հետ

16. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի կիրառման իրավական հենքը
17. ՄԱԿ-ի մարդու իրավունքների միջազգային դաշնագրերի կիրառման դժվարությունները և առանձնահատկությունները «Երրորդ աշխարհի» երկրներում
18. .«Օմբուդսմենի» ինստիտուտի ձևավորման պատմական գործընթացը: Եվրոպական պետությունների դերը խնդրո առարկա բնագավառում
19. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի մշակումը և ընդունումը: Մարդու իրավունքների պաշտպանի ընտրությունը ՀՀ-ում և նրա գործառույթները
20. Իսլամը և մարդու իրավունքները: Շարիաթի իրավունքը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում
21. Կրոնական ուսմունքների դերը իրավունքների հայեցակարգի կայացման բնագավառում
22. Մարդու իրավունքների գաղափարախոսությունը և փիլիսոփայությունը ժամանակակից միջազգային հարաբերություններում: Արևմտյան քաղաքակրթության դերը մարդու իրավունքների գաղափարախոսության բնագավառում: Մարդու իրավունքների բարեփոխումները ՄԱԿ-ի համակարգում